



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

U. G.
749

003 + 417.3 / 07.985

17 981 2-4

417.147

Արսասյուրիւն 1901 թ-ի «Արարատ»-ի նոյնը. — Գեղի. համարից,

Էջ 542—549

ԱԿԱԴԵՄԻԿԱՍ
ՀԱՆՈՐ Հ. ՄԱՆԱՆԳՅԱՆ

ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՅՈՒ ՁԵՌԱԳՐԵՐԸ

Ղազարի Ձեռագրերը նշանակում են հետևեալ տասերով.

L= ՈՂԱ. (=Փրկչ. 1642) թուին Բաղէշում գտնուող մի հին և կազմալուծուած ձեռագիր, որի գրութեան տեղը ժամանակը և այժմն ուր գտնուիլը չգիտենք: Լ-ի մասին ունինք հետևեալ տեղեկութիւնը պահուած Բ-ի մէջ, էջ 486բ (Ղազարի Քղթի վերջում). «... Ող սուրբ ընթերցաւոր և եղբարք, գիրքս հին էր և աւրինակս: Յունան վարդապետն կարգացեալ էր գաւրինակն և նորոգեալ և զգահասութիւն թղթոյն՝ որ պակասէ՝ ոչ էր գտեալ և ես ոչ կարացի գտանել ազաչեմ՝ զամենեսեանս եթէ զացի գիրքս այս ուրեք՝ զբեռջիք զպակասումն թղթ-թոյս և զէք ի սմայ. նախ զսկիզբն զրոցս, և ապա յերիս տեղին թուղթ մի անկեալ կայ ... »: Յիշատակարանիս զբիշն է Գրիգոր երէց, Վարդան Բաղիշեցու ժամանակակից:

B= Գեորգ. Յուցակ. № 611: Առաջ կրում էր 2463 թուահամարը Քուղթ, բոլոր-գիր: Մանրամասն նկարագրուած է իմ «Խորեն. Պատմ. Ուսում» մէջ, զէ Գ. էջ 37—45: Պատմագրութեանց մի հուարածու է: Առաջին մասը՝ Աղաթան-գեղոս, Դաշանց Քուղթ, Մեծին Ներսիսի Վարք, Խորենացի, Եղիշէ՝ Գաւրոյցի

ՄԱԳ
742

Պօղոս երկրորդ ձեռքով են զբուսած, ՌճԻՍ. = 1672 թուին: Երկրորդ մասը՝ այն է՝ Վաղար փարպեցու Պատմ. և Թուղթը յառաջարանով միասին: Անանուն (Մծուբնայի), Սերէոս և Կորիւն Գրիգոր երկրորդ ձեռքով Բաղէշում Վարդան Բաղիշեցու հրամանով: Երկրորդ մասի յիշատակարաններում թուական չկայ: Անանուն, Սերէոս և Կորիւն չունին հեղինակի անունան յիշատակութիւն: Լ-ի մասին մեր ունեցած տեղեկութիւնը այս ձեռագրիցն է: Բ-ն ընդօրինակութիւն է Լ-ից:

B² = Բաղէշում զբուսած մի այժմն անյայտ Զ-ից՝ որի յիշատակարանը միայն պահուած է Վիեննայի Մխիթ-ի № 257 Զ-ում. «Աւարտեցաւ գիրքս Վաղարու վարդապետի փարպեցույ ձեռամբ բաղմախի և անարժան Գրիգոր երկրորդ, ի հարկէ սրբազան և քաջ վարդապետին Վարդան զիտապետի»: Այս աղբիւրը բաւարար չէ նոյնն են Բ-ի յիշատակարանի հետ, այնպէս որ կարելի էր կարծել որ ընդօրինակուած են Բ-ից բայց B²-ը ունի որոշ թուական, որ Բ-ն չունի: B²-ի թուականն է՝ «Արդ օրինակեցաք զիրքս այս ի թուին Հայոց ՌՂԱ. (= 1642) ի Բաղէշ ի վանսն Յովհաննու Կարապետի». (Տաշ. Յուց. էջ 657):

W = Վիեննայի № 257-ը, նոր Զ-ը, թուականը արտագրութիւնն, միջապէս կամ անմիջապէս B²-ից: Ունի միայն Վաղարի Թուղթը, առանց «յառաջարանի», նաև հատուածների շարադասութեան տարբերութիւն է մինի հրատարակութիւնից, բայց մի և նոյն պահանջները, տես մանրամասն Տաշ. Յուց. 657:

E = Էջմիած. Մատեն-ի № 1688, 1 = Կարին. Յուց. № 1646, 1. կաշեկազմ 23x15, թուղթ, նոսր: Բովանդակութիւնն է՝ էջ 3ա - 156ա Վաղարի Պատմութիւնը, էջ 156բ - 167բ դատարի, երևի Վաղարի Թուղթը զբերու համար, էջ 168ա - 183բ Կորիւն:

Է-ի վերնագիրն է՝ «Պատմութիւն Վաղարու փարպեցույ, Չոր արարեալ է վանսն անցից Հայաստան աշխարհիս, առ ժամանակօք երանելի և սուրբ Հայրապետաց մերոց՝ և թարգմանչաց Սահակայ և Մեսրոպայ, մինչև ցօր մարդպանութեան Վահանայ Մամիկոնոյ: Արտագրեցեալ ի սրբազիր օրինակէ՝ ի Սուրբ Աթոս Էջմիածին. հրամանաւ գերբնախի զահակալի սորին Տեառն Սիմեոնի Սրբազան Կաթողիկոսի: Ի թուոջ Փրկչին . ուէճճդ. [= 1774], իսկ մեր թուականիս ՌճԻՍ»: Աւրիշ յիշատակարան չկայ: Է-ն ամենայն հաւանականութեամբ, ինչպէս պիտի տեսնենք ներքևում, ընդօրինակուած է Բ-ից:

Q = Չամչեանի օրինակը, որ ունի միայն Վաղ-ի Պատմութիւնը, Իւր Հայոց Պատմութեան մէջ Չամչեան արդէն օգտուած է Վաղ-ի Պ-ից. 1784-ից առաջ: Վենետիկի Ա հրատարակութիւնը [= T¹] 1793-ին է: Դեռ Վաղ-ի Թուղթը յայտնի չէր: Ինչպէս տեղեկանում ենք մի ձեռագիր Յուցակից (Վենետիկի Զ-երի) երկու (կամ ուրիշ տեղեկութեամբ՝ երեք) օրինակ կայ Վաղ-ի Պատմութեան Վենետիկում, բայց այդ օրինակները միմեանցից են ընդօրինակուած. Չ կամ T¹ ծագում է ուղղակի Է-ից, որի մէջ նոյնպէս պահուած է Վաղարի Թուղթը:

T = Էմիլի հրատարակութիւնը (1853) ծագում է Բ-ից: Շահախոսութեան ձեռքում եղածը մեր այժման Բ-ն է: Վաղարի Թուղթը առաջին անգամ գտնուեց Եսեբը 1829-ին: Էմիլը իւր հրատարակութեան համար ունի երկու ընդօրինակութիւն Բ-ից, մէկը Մեսրոպի միւսը Շահախոսութեան ձեռքով. (տես մանրամասնարար Յառաջ. Էմիլի, էջ 30-31):

Ար. = Գեորգ. Յուցակի, № 285, որ է Թուղթ Վաղարայ, ընդօրինակութիւն Բ-ից Արեւի ձեռքով (Ետայ արքեպիսկոպոս), 1850 թ-ին:

Ամփոփելով այժմ այս բոլոր տեղեկութիւնները, դալիս ենք հետեւեալ եզրակացու.




742
737

թեանը: Վաղարի թի, Պատմութեան և թի, Թղթի միակ և մայր Զ-րն է Լ, որից ծագում են մեզ յայտնի բոլոր Զ-երը ունենալով նոյն պահանջները ինչ որ ունեցել է Լ-ն: 17-դ դարի առաջին կեսում Բաղէշի Ամբրոզու կամ Ամբրոզու վանքում Յունան վարդապետը կարգապէս և նորոգել է այդ «Հին» և կազմակուծուած Զ-ը: Կայ արդեօք այժմն այդ Զ-ը Բաղէշում: Եստ ցանկալի զիւս կլինէր Լ-ի երևան գալը:

Բաղէշում՝ նոյն 17-դ դարի առաջին կեսում՝ Վարդան Բաղիշեցու հօգաւարութեամբ Գրիգոր երեցը ընդօրինակում է Բ-ն, որ այժմն՝ բաւական թափառելուց յետոյ մեր ձեռքումն է և որի անկորուստ պահպանութիւնը ապահովուելու համար մուծել տուինք Գեորգ. Յուցակը (համար 611): Նոյն Գրիգոր երեցի ընդօրինակութիւնն է B², 1642 թուին: Այս B²-ի գոյութիւնը ենթադրութեամբ միայն զիտեք, հիմնուելով Վիեննայի (=W) Զ-ի վրայ: Եթէ W-ի մէջ բերած 1642 թուականը չէ կեղծիք կամ ընդօրինակողի շարադրութիւն՝ պէտք է անպատճառ գոյութիւն ունենայ B²: Է-ն ծագում է մեր ենթադրութեամբ, Բ-ից, իսկ Չ(ամչեանի օրինակ)ը Է-ից, բայց ոչ Բ-ից: Է-ի սխալները փոքրիկ պահանջները և մի մեծ ընդմիջարկուած հատուածը ճշտութեամբ ունի Չ-ն: Վերջապէս Բ-ից են ծագում և Թղթի օրինակները՝ է, Ար. և Լ:

Այսպիսով ստանում ենք Վաղարի Զ-երի և ապագրերի այսպիսի մի ճննդարանական պատկեր.



Այսպէս ուրեմն՝ Վաղարի Պատմութեան ապագրութիւնն եղել է միմայն Է-ից ծագած օրինակից, Բ-ն մնացել է չորսրծածուած: Բննադատական հրատարակութեան համար անհրաժեշտ է վերագրանալ Բ-ին և գործածել նաև W-ն Թղթի համար, բանի որ անյայտ են մնում B² և Լ-ն: B²-ի գոյութիւնը ինչ թուում է բաւական կապահովելի որովհետեւ W-ի Թուղթը չունի «յառաջարանը», մինչդեռ Բ-ի մէջ Վաղ-ի Թուղթը և Թղթի յառաջարանը միասնաբար մի ամբողջութիւն են կազմում, և նոր հրատարակներն են միայն

որոշել թէ որտեղ է վերջանում «Յառաջարանը» և սկսում բուն թուղթը: Ե-ի մէջ այսպէս ձուլուած են «Յառաջարանն» ու թուղթը. «Վասն որոյ և զերբորդ պատուութիւնս Հայոց երանելի իմ Ղազար պատմագրեաց, ընդ նմին զրեցար և զթուղթս, զի ընթերցասէրքն զպատմութիւնս կարգալով ընդ նմին և զթուղթս ընթերցեալ զխորձ սուցեն նորա լաւութեան բանին: Փրկիչն մեր [նախապէս գրուած է էղէ՛ւ Փրկչին սն մեր] և աէր Յս. Քս. քաջ զգուշացուցանելով պատուիրէր առաքելոցն և ին» (Ե Էջ 477 ր): Ատորին լուսանցքում, նորագոյն զրչով, երևի Մսերի կամ Շահխաթունի, ցոյց է արուած խաչանիշով, որ Փրկիչ բառով սկսուած է բուն թուղթը. «Ս, յս է սկիզբն թղթոյն Ղազարու Փարպեցոյ»: Աւրեմն Գրիգոր երեցը Ե-ի զրոյր, չէ նկատել թղթի սկիզբնաւորութիւնը, և որովհետեւ Ե-ի զրչը մի և նոյն անձն է, ուստի շատ կասկածելի է որ Ե-ից ընդօրինակուած Մ-ն չունի Յառաջարանը և զիտէ ճշդութեամբ թղթի սկիզբնաւորութիւնը: Եթէ այս կասկածներն արդարանան Մ-ի մանրամասն ուսումնասիրութեամբ, այն ժամանակ Մ-ն ծագած կլինի ուղղակի կամ անուղղակի Ե-ից և ոչ ենթադրական Ե-ի միջնորդութեամբ Լ-ից, և կիրոցնէ իւր նշանակութիւնը քննադատական բնորդի համար:

Մեզ մնում է այժմ՝ դառնալ Ե-ի, Է-ի և Է-ից ծագած վնեակեան Առաջին ապագրի [=T¹] յարարութեան խնդրին:

Է-ն պարզորոշ վկայում է, որ գրուած է Էջմիածնում 1774 թուին սրբազիր օրինակից, «ի սրբազիր օրինակէ», այսինքն՝ մարութ, զեղեցիկ օրինակից: Ե-ն խիստպէս բաւական սիրուն բոլորգիր գրչութիւն է, կոի փայլուն թղթի վրայ, զեղեցիկ կաշեկաղմ, լուսանցներում՝ գունաւոր զարդերով՝ մասնաւորապէս Զ-ի Ա մասը, և մի քանի պատկերներով: Բացի Ե-ից Էջմիածնում՝ ինչպէս այժմս, ամենայն հաւանականութեամբ նաև 1774-ին՝ Փարպեցու ուրիշ Զ-ը չկար, ուրեմն և Ե-ն միակ օրինակն էր, որից կարող էր արագրուիլ Է-ն: Ե-ն թէև չէ մասն Կարին, ցուցակի մէջ, բայց մենք անանք որ 1829-ին արդէն շատունց Էջմիածնումն էր:

Է-ն մի բաւական անխնամ ընդօրինակութիւն է Ե-ից: Տեղ տեղ Է-ն թուում է բառեր, երբեմն ամբողջ նախադասութիւններ, բայց է թողնում մի տաս կամ մի նախդիր, տառասխալ է անում և այլ այսպիսի մանր տարբերութիւններ, բայց չունի որ և է աւելի բառ կամ նախադասութիւն, որ չզանուէր Ե-ի մէջ և ստիպէր մեզ Ե-ից տարբեր մի ուրիշ գաղափար օրինակ ենթադրել, որից արտագրուած լինէր Է-ն: Է-ի բոլոր այդ մանր տարբերութիւնները ճշգրտութեամբ կշիւնում են Վենետիկի Ա հրատարակութեան մէջ, մի քանի ակներև սխալների կամ պակասաւոր բառերի սրբազրութեամբ, որով անպայման ապացուցուում է, որ Վենետիկի օրինակը (կամ օրինակները) ծագում է անմիջապէս Ե-ից: Այստեղ աւելորդ ենք համարում երկու օրինակներ բերել այդ մանր տարբերութեանց, ընթերցողին մնում է հաւատալ մեր հաւաստիացմանը, մինչև որ լոյս տեսնի Փարպեցու մի նոր քննադատական հրատարակութիւն Ե-ի, Է-ի և Մ-ի բաղադատութեամբ: Է-ն և նրա հետ միասին Վենետիկեան հրատարակութիւնները ունին միայն մի մեծ հատուած, որ չկայ Ե-ում, բայց այդ հատուածն էլ ընդմիջարկութիւն է Է-ի մէջ, որից անցած և Վենետիկի Զ-րին: Այդ հատուածը Խորենացու շատ ծանօթ մի կտորն է, բայց անուած ոչ ուղղակի Խորենացու որ և է ձեռագրից, այլ ինչպէս իմ մանրաքննին խուզարկութիւններս ինձ համոզեցին՝ Խորենացու 1695 թուի («Սմասէլօղամի») հրատարակութիւնից, այդ հրատարակութեան բոլոր մանր և բնորոշ տարբերութիւններով, որով նորից անհասարկ է դառնում Փարպեցու ուրիշ՝ մեզ անծանօթ՝ մի Զ-ը ենթադրել, որից արած լինէր Է-ն իւր ընդօրինակութիւնը: Մեր ասածն ապացուցանելու համար դնում ենք այստեղ այդ ընդմիջարկուած կտորը չորս սիւնակով՝ Ե-ից, 1695-ի Խորենացու ապագրից, Է-ից և վնեակեան Առաջին հրատարակութիւնից:

B	Խորենացի.	E	Ղազ. Փարպ. Պատմութիւն
17-դ դարի առաջին կիսի ձեռագիր:	հրատարակութիւն 1695 թուի	1774 թուի ձեռագիր	հրատարակութիւն 1793 թուի
Էջ 8բ.	Էջ 409—410	Էջ 14բ—15բ	Էջ 27—29

«Աւ երանելոյն Հարելի ընկալեալ զհրովարտակն ի Վահրիճէ և լուեալ զիրան փութանակի հասանէր առ սրանչելի եպիսկոպոսն Դանիէլ. և նախ անդէն ի նմին Դանիէլէ ինքն տեղեկանայր զկարգ նշանագրացն. և առեալ ի նմանէ առ թագաւաւորն և առ սուրբ հայրապետն Հայոց Սահակ և առ երանելին Մաշթոց հասուցանէր: Իսկ արքայն Հայոց սուրբ կաթաղիկոսաւն Սահակաւ և երանելեան Մաշթոցիւ ընկալեալ զնշանագիրան ի Հարելէ ուրախ լինէին:

«Աւ երանելոյն Հարելի ընկալեալ զհրովարտակն ի Վահրիճէ, և լուեալ զիրան փութանակի հասանէր առ սրանչելի եպիսկոպոսն Դանիէլ. և նախ անդէն ի նմին Դանիէլէ ինքն տեղեկանայր զկարգ նշանագրացն. և առեալ ի նմանէ, առ թագաւորն և առ սուրբ հայրապետն Հայոց Սահակ, և առ երանելին Մաշթոց հասուցանէր: Իսկ արքայն Հայոց սուրբ կաթաղիկոսաւն Սահակաւ և երանելեան Մաշթոցիւ ընկալեալ զնշանագիրան ի Հարելէ ուրախ լինէին:

«տեղեկացեալ՝ գիտացին ոչ լինիլ բաւական՝ այնու նշանագրօք՝ ստոյգ հօլովիլ ըզհեզենայ բառից Հայկականաց հազներգարար, մուրացածիւն այնուիկ զծագրութեամբ:

[Պրակ ԾԳ.]
 Չկնի այսորիկ՝ ինքնին Մեսրոպը իջանէ ի Միջագետս. հանդերձ աշակերտօք՝ առ նոյն Դանիէլ, և ոչ՝ աւելի ինչ գտեալ քան, զառաջինն. անցանէ յեղեսեայ առ Պղատոս ոմն՝ ճարտասան Հեթանոս, իշխան Դիւանին. և նորա խնդութեամբ ընկալեալ, և զոր ինչ մի անգամ ի միտ առնոյր բան Հայերէն՝ ինքն առեալ, և շատ ջանացեալ՝ և ոչ օգտեալ, զտգիտութիւն՝ խոստովանեաց Հռետորն, և զայլ ոմն ասելով՝ յոյժ հասու Վարդապետ իւր լեալ առաջագոյն, և ապա՝ առեալ զճարտարացն գրեան ի նոյն Դիւանէն եղեսեայ՝ և զնացեալ Քրիստոնէութեան հաւատաց, որոյ անունն Եպիֆանոս, զոր խնդրեալ՝ գտցես լցուցանել զփափագ գր: Յայնժամ Մեսրոպայ՝ օգնականութիւն ի Բաբելոնէ Եպիսկոպոսէ՝ գտեալ, և անցեալ

Չկնի այսորիկ ինքնին Մեսրոպը իջանէ ի Միջագետս. հանդերձ աշակերտօք առ նոյն Դանիէլ, և ոչ աւելի ինչ գտեալ քան զառաջինն. անցանէ յեղեսեայ առ Պղատոս ոմն՝ ճարտասան հեթանոս, իշխան գիււանին. և նորա խնդութեամբ ընկալեալ, և զոր ինչ մի անգամ ի միտ առնոյր բան հայերէն, ինքն առեալ և շատ ջանացեալ և ոչ օգտեալ. զտգիտութիւն խոստովանեաց հռետորն, և զայլ ոմն ասելով յոյժ հասու վարդապետ իւր լեալ յառաջագոյն. և ապա առեալ զճարտարացն գրեան ի նոյն գիււանէն եղեսեայ. և զնացեալ քրիստոնէութեան հաւատաց որոյ անունն Եպիֆանոս. զոր խնդրեալ գտցես լցուցանել զփափագ գր: Յայնժամ Մեսրոպայ օգնականութիւն ի Բաբելոնէ Եպիսկոպոսէ գտեալ, և ան-

հասանէր

ի Հարելէ բայց լինել

յառաջագոյն

անունն Եպիֆանոս զփափագ

ընդ Փիւնիկէ՝ Ի Սամոս դի-
մէ. քանզի՝ Եպիփանու վը-
ճարելով զկենցարս թողեալ
լինի աշակերտ մի անուա-
նեալ՝ Հուռմանու՝ հրա-
շալի արուեստիւ Հելլեն
զըջութեամբ՝ որ Ի Սամոս
էր միայնացեալ: առ սա
կըթեալ Մեսրոպայ՝ և յայսմ
ևս անշահ մնացեալ, յա-
ղօթս ապաւինի. և տեսանէ
ոչ Ի քուն՝ երազ, և ոչ
յարթութեան՝ տեսիլ. այլ
Ի սրտին գործարանի երև-
ութեացեալ հոգւոյն աչաց.
Թաթ ձեռին աջոյ՝ գրե-
լով Ի վերայ վիմի, զի՝ որ-
պէս Ի ձեան վերջը գծին
ունէր քարն: և ոչ միայն՝
երևութեացաւ, այլ՝ և հան-
գամանք ամենայնիցն, որ-
պէս՝ յաման ինչ՝ Ի միտս
նորա հաւարեցաւ: և յա-
րուցեալ յաղօթիցն՝ ետեղծ
զնշանագիրս մեր՝ հանդերձ
Հուռմանուսիւ, կերպածե-
ալ զգիրն՝ առ ձեռն պատ-
րաստ: Մեսրոպայ փոխա-
տրելով գհայերէն Աթու-
թայան՝ ըստ անայթարու-
թեան Սիլլարայիցն Ի Հել-
լենացոյն:»

ցեալ ընդ Փիւնիկէ, Ի Սա-
մոս դիմէ. քանզի Եպիփա-
նու վճարելով զկենցարս.
Թողեալ լինի աշակերտ մի
անուանեալ Հուռմանու հը-
րաշալի, արուեստիւ՝ հելլեն
զըջութեան. որ Ի Սամոս էր
միայնացեալ: Առ սա կը-
թեալ Մեսրոպայ, և յայսմ
ևս անշահ մնացեալ. յաղօ-
թս ապաւինի. և տեսանէ,
ոչ Ի քուն երազ, և ոչ յարթ-
ութեան տեսիլ. այլ Ի սր-
տին գործարանի երևու-
ցեալ հոգւոյն աչաց. Թաթ
ձեռին աջոյ գրելով Ի վե-
րայ վիմի. զի որպէս ձեան
վերջը գծին ունէր քարն. և
ոչ միայն երևութեացաւ, այլ
և հանգամանք ա միցն. որ-
պէս յաման ինչ Ի միտս
նորա հաւարեցաւ, և յարու-
ցեալ յաղօթիցն ետեղծ
զնշանագիրս մեր. հանդերձ
Հուռմանուսիւ կերպածե-
ալ զգիրն առ ձեռն պատ-
րաստ Մեսրոպայ. փոխա-
տրելով գհայերէն Աթու-
թեան ըստ անայթարու-
թեան սիլլարայիցն Ի Հել-
լենացոյն:»

Հուռմանու
զըջութեան

չիտ աչաց

Ի ձեան

ա մից

Հուռմանուսիւ

սիլլարայիցն

Նւ այսպէս զիպեալ զիւտի
նշանագրացն, ձեռն Ի գործ
արկանէր երանելին Մաշ-
թոց, յերկրելով զնա սուրբ
հայրապետին Հայոց Սահա-
կայ զիւրանար ճանապարհ
ցուցանելով կարգադրու-
թեան գրենոյս, և հեղենա-
լին, ուղղաձայնութեան:»

Նւ այսպէս զիպեալ զիւտի
նշանագրացն. ձեռն Ի գործ
արկանէր երանելին Մաշ-
թոց. յերկրելով զնա սուրբ
հայրապետին Հայոց Սահա-
կայ. զիւրանար ճանապարհ
ցուցանելով կարգադրու-
թեան գրենոյս, և հեղենա-
լին ուղղաձայնութեան:»

կարգադրու-
թեան

յիցն: Ե-ն էլ տառացի ճշտութեամբ արտադրում է «Եպիփանոս» և «Փիւնիկէ»
նոս, Հուռմանուսիւ, սիլլարայիցն: Իւր կողմից շատ բնական մի քանի ուղղադրական տար-
բերութիւններ մտցնելով անգիտակցաբար՝ «յառաջագոյն» անունն, զըջութե (փոխանակ՝
զըջութիւն էր Ե-նի մէջն էլ պատճառով զիւր-սիւն) ինչպէս որ Ե-ից արտադրուած հատուած-
ներումն էլ անուշադրութեամբ գրում է՝ «հասաներ» (=հասուցաներ), «կարգադրու-
թեան» (=կարգադրութեան) ևն: Վենետիկի Ա. հրատարակութիւնը տառացի ճշտու-
թեամբ արտադրում է Ե-ից վերականգնելով փիւրները և ուղղելով՝ ըստ Փարպեցու՝ սիլ-
լարայիցն=սիլլարայիցն:

Ի և Պ. հրատարակութիւնները աւելի ևս յղիւմ են և կոչում Խորենացու և ճառ-
ընտիրներն օժանդակութեամբ Ղազարի բնագիրը, առանց նշանակելու լուսանցքում՝ ա-
րուած փոփոխութիւնները, որով կորչում են բնագրական հետազոտութեանց համար ամե-
նակարևոր հետքերը: Ա. յսպէս, օրինակ, 1891-ի հրատարակութիւնը մեզ հետաքրքրող
հատուածում ունի հետևեալ սրբադրութիւնները՝ Ա. աղագրից տարբեր. «յից և սիլլարայիցն»
(՛իւ. յից և սիլլարայիցն) «կարգադրութեան» (=ունէր քարն շէ՛ կուտակեալ), «ամենայն»
(=ամիցն=ամենայնիցն), «կարգադրութեան» (=կարգադրութեան): Եթէ այս բոլոր
մանր տարբերութիւնները նշանակուած լինէին, և մանաւանդ՝ եթէ Ա. աղագիրը պահած
կամ նշանակած լինէր «Եպիփանոս» Հուռմանուսիւ, սիլլարայիցն» ևն. ընթերցուածները՝
շատ աւելի զիւրին կլինէր բանասերներին դանել ընդմիջարկութեան բուն աղբյւրը՝ այն
է՛ Խորենացու Ա. աղագրութիւնը (1695 թուի):

Խորենացու՝ ինչ յայտնի՝ ոչ մի խմբի և ոչ մի ձեռագիր չէ կարող Ե-ին իրրե զա-
գափար ծառայած լինել: Ընդմիջարկեալ հատուածին համեմատաբար աւելի մօտ են իրենց
ընթերցուածներով Խորենացու արքայ խմբի ձեռագրերը (տես իմ Հայկականք, Ժ), իսկ
տառացի նոյնանում է միմայն 1695-ի հրատարակութիւնը (կամ սրբ անփոփոխ արտա-
ագրութիւնը 1752 թուի):

Ա. յսպիսով ուրեմն՝ մենք զիտենք, որ 1774 թուին ընդմիջարկուել է Ղազարը Ե ձե-
ռագրում. որ ընդմիջարկուած հատուածը առնուած է պատճառով Խորենացուց. որ զիւ-
հագրու տասը տարի անցած, 1784-ին, Չամչեանի ձեռքում եղած Ղազարը ինչպէս և
1793-ի առաջին աղագրութիւնը լոկ ընդօրինակութիւններ են ընդմիջարկուած Ե-ից:
Սրանով որոշուում է նաև Բաղէշի ձեռագրի (=B) բացառիկ նշանակութիւնը Ղազար
Փարպեցու թէ Պատմութեան և թէ Քղթի համար: Նոյն նշանակութիւնն ունի Ե-ն նաև
Սեբեոսի և Անանուցի բնագրերի համար:

Ա. յսպիսով վերջանում է մեր հետազոտութիւնը: Մնում է միայն իրրե պարտք յիշել,
որ բանասիրութիւնը միշտ կասկածով է վերաբերուելիս եղել Ղազարի այս ընդմիջարկուած
հատուածին: Խալթեանն ունեցել է այդ գտակածները, հիմնուելով Ղազարի զործածած
«Մաշթոց» և Խորենացու «Մեսրոպ կամ Մեսրոպ» անունների վրայ, ինչպէս այդ երևում
է ինչ գրած սոյն այս տարուայ յունիսի 14-ի նամակից, որն և առիթ եղաւ շտապիլ
մեր տարիներ առաջ արած զիտողութիւնները Ղազարի վերաբերութեամբ ամփոփելու և
լրացնելու: Ընդարձակ ունի այդ մասին գրած և պ. Խաչատր Յարութիւնեանց, զեղեցիկ
պատճառաբանութեամբ (տես «Հայոց Գիրք» Թիֆլիս, 1892, մասնաւորապէս էջ 231—
234) եթէ միայն այդ յաջող պատճառաբանութիւնը պ. Յարութիւնեանցի սեպտական
խնդրի ծնունդն է և չէ՛ իրրե մի հաւաքագրական աշխատութեան մէջ, լուրեպայն փո-
խառութիւն, առանց ազդելի ցուցման: Յամենայն զէպս այս խնդրով զբաղուողները
իմ զիտեցածով առաջինը, որ ուշադրութիւն է դարձրել Մաշթոց և Մեսրոպ անուն-
ների Փարպեցու և Խորենացու մէջ այլապես զործածութեան վրայ, որ հետևանքներ է
հանել այդ տարբերութիւնից, ներմուծուած հատուածը համարելով Խորենացու զըջի
ծնունդ և անհարգաւոր Փարպեցու մէջ, առում ենք այդ առաջին և միշտ մոռացուած

* Ամենայն հաւանականութեամբ այդ անունն գրիւր Օշակացի Առնիկանու դպիրն է, որի գրչութեամբ
առիշ մնուած էր կան Մայր Արարի Մասնաշարանում:

հետազոտողն է մեր լաւ հայկաբաններից մէկը՝ Է. Սուքիաս Պարոնեան, և այժմն՝ երբ վերջնականապէս լուծուած է այս պատմական—բնագրաբնական խնդիրը, մենք առանձին հաճութեամբ արձանագրուած ենք այստեղ՝ մեզ անձամբ անձանօթ՝ Պարոնեան վարդապետի անունը (տես Հայկական Նշանագիրք՝ Սուքիաս վ. Պարոնեանի, Երկրագրութեան 1884—5, մասնաւորապէս էջ 492, ճնթ. 2.):

Նախադրելուների հետազոտութիւնը մեծ մասամբ մեզ հասցնում է մի կամ առաւելին երկու, յամենայն գէպս շատ նուազ թուով, մայր Զ-երի որոնցից ընդօրինակութիւն են դուրս գալիս այժմեան եղած միւս բոլոր ձեւադրերը: Այսպէս էլ ինչպէս անսանք, Փարսկցու, Անանուն — Մծուրնացու, Սեբեոսի բնագրերի զբուրթիւնը: Միակ ձեւադրից են [==E==; ջմիսնի օրինակ], ինչպէս ցոյց տուեց Թ. Մոմսէնի հետազոտութիւնը, հիմնուած իմ բաղդատութեանց վրայ, Եւսեբիոսի Քրոնիկոնի բոլոր յայտնի ձեւադրերն ու հրատարակութիւնները, բոլորի մէջ մի և նոյն թերթներով և տարրեր՝ յաջող և անյաջող սրբագրութիւններով և աւել-պակասներով (տես Th. Mommsen: Die Armenischen Handschriften der Chronik des Eusebius, արտատպութիւն Hermes-ից, Բերլին 1895): Եստ չեն և Անանիա Սահացու Զ-երը, որոնցով առիթ ենք ունեցել զբարեկերպ «Արարատում»: Նոյն վիճակում են և Եւսեբիոսի Եկեղեց. Պատմութեան Զ-երը՝ ինչպէս պիտի ապացուցանենք առաջին պատահ առիթը: Եւ այսպէս ուրիշ շատ շատերը:

Խորենացու բաղմամբիւ Զ-երը, իրենց բաղմամբութեամբ և տարրեր խմբերով վերածուելու են մի երկու Զ-րի: Այսպէս և միւսները: Պատճառները շատ պարզ են: Մեր հայրենիքում այնքան յաճախ աւերածների և կոտորածների ժամանակ պարբերաբար ոչնչացուել են մատենագրանները՝ մարդկանց հետ հաւատար կոտորուել, այրուել և գերուել են ձեւադրերը: Երբ յաջողուել է փոթորիկն անցնելուց յետոյ ազատել մի թերատ, վերաւոր, պատաստուն ձեւագիր, նորից և նորից սկսուել է վերանորոգութեան գործը, ընդօրինակուել են ազատուած ձեւադրերը կազմուել են թափուած թերթերը անգի և անտեղի կարկատուել են պատաստուածները, լրացնելով թերթն յաջող կամ անյաջող կերպով: Աւելի հմուտ զրիչները շատ անգամ յիշում են թերթները և պակասածի համար թերթ թողնում ապագայում լրացնելու համար: Բայց մեծամասնութիւնը արտագրում են առանց նկատելու թերթները, թերթերի յեռեւտաջութիւնը, առանց յիշելու իրենց կարկատանների պարզամիտ յաւելուածների մասին: Եւ հեռեւանքն է կրել այն, որ զրեթէ չունինք հին գրութիւն, որ չյարուցանէ ուսումնասիրողի մէջ կասկածներ, ստատմութիւն և ենթադրութիւններ անհարազատ ձեւնմութեանց մասին:

Այս բոլորի վրայ պէտք է աւելացնել մեր մի քանի հեղինակութեանց, մասնաւորապէս Խորենացու միահեծան և անդիմադրելի ազդեցութիւնը մեր ամբողջ մատենագրութեան վրայ՝ սկզբից մինչև այսօր: Խորենացուն են ենթարկուել ոչ միայն իրանից յետոյ եկող զրոյներն ու գրութիւնները, այլ նոյն իսկ Խորենացուց աւելի հին հեղինակութիւնները՝ օրին. Վորիւն, Ղազար, Սեբեոս և չն, և սրբագրուել են և փոփոխուել Խորենացու ոչ կեղծելու գիտաւորութեամբ, այլ հաստատուն և պարզամիտ հաւատով Խորենացու անսխալականութեան վրայ:

Խորենացու համաարած ազդեցութիւնը՝ թէ զէպի առաջ, թէ զէպի յետ, երբէք չգէտք է մտանալ:

Գալուս Տէր Մկրտչեան

29 Սեպտ 1901.



